

իրարու հետ կը մարտնչէին պատրիարքական աթոռին համար, որով ազգին մէջ մեծ յուզում կը տիրէր:

Ըստ Դարանազցիին «Հայք կու գնան մօտ Կեսարացի Գրիգոր Վարդապետն՝ որ յայնմ ժամանակին եկեալ էր ի Կեսարիայ, իբր թէ խրատ սայ՝ եւ դիւրութիւն առնէ անոցա: Իսկ նա փոխանակ օրհնէրոյն եւ խրատէրոյն՝ կու սաստէ եւ կու յսնդիմանէ զնոսա ստեղծով, թէ դուք ո՞վ էք, որ այդպէս բան կու տեսնուիք. քնանկներն եւ սեփական տեղացիքն կը հոգան, եւ այլ գուրտ բանք շատ կ'ստէ եւ կու յուսահատէ զնոսա . . . ի յայտիկ թշուառական ասեմին ինքն, այսինքն Գրիգոր վարդապետն, եւ կաւ Խուշն բնաւ փոյթ չեն առնոյր ոչ եկեղեցականացն եւ ոչ քրիստոնէից անհնարին սոցոյն եւ անսխիբար վշտացն: Այլ եւս առաւել սղմուկ եւ խոռոխութիւն կու արկանեն ի մեջ ազգիս Հայոց յաղագս Պատրիարք առնէրոյ: Քանզի Գրիգորս այս մարտ եղեալ էր հետ Յովակիմին մինչ զնա փախուցեալ էր ի Պրուսայ եւ ինքն տիրեալ էր բռնութեամբ առանց հրամանաց արժունեացն» (Դարանազցի, էջ 186):

Գրիգոր Կեսարացի չի գիտցուիր ինչ պատճառներէ թելադրուած՝ այս շփոթ կացութեան մէջ «ի տեղի իւր եղեալ . . . զեզակացի Յովակիմ Պակրատուր Զագն» կ'երթայ «ի Լեհաց աշխարհն» (նոյն, էջ 186):